Բ. ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ 24 ՅՈՒԼԻՍ 1899 — ԹԻՒ 148

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Բուլղարիոյ համար
Տարեկան 10 Ֆր.
Վեցամսեայ 5 »
Օտարաշխարհի համար Տարեկան 12 »
Վեցամսեայ 6 »
Ամերիկայի համար
Տարեկան 2.50 տլր.
Վեցամսեայ 1.25 »
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ
Յայտարարութեանց տողը առաջին երեսին համար 40 սանթիմ և. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ և. երեքէն աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կըլլայ։

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Նամակ եւ դրամ ղրկել Խմբագրութեան հասցէին

Редакция на вѣстникъ «Шаржумъ» Варна.

Redaction du journal «Charjoum» Varna (Bulgarie)

Գրութիւնք ետ չեն տրուիր

)(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)(

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

)(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)(

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՍԵՌ ԿՐԹԱՐԱՆ
ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՒ ՑԵՐԵԿԵԱՅ

Բ. ՏԱՐԵՇՐՋԱՆ

Վարժարանս խիստ դժուարին պայմաններու մէջ յաջողապէս բոլորելով իր առաջին շրջանը, կը վերաբացուի յառաջիկայ Սեպտ. 1/13ին, աւելի լայն ծրագրով մը եւ շրջապատուած նոր ուժերով։

Կաւանդուին, բացի հայերէն, պուլկարերէն ու ֆրանսերէն լեզուներէն՝ որոնք պարտաւորիչ են, նաեւ անգլիերէն ու գերմաներէն՝ կամաւոր։

Խնամքով կաւանդուին նաեւ ծրագրուած գիտութեանց բոլոր ճիւղերը, գործնական ու փորձառական մէթոտով։ Դպրոցական առարկաներու անհրաժեշտ հաւաքածոյ մը կը դիւրացնէ թէ՛ ուսուցչին եւ թէ՛ ուսանողին աշխատութիւնները։

Ջութակի եւ դաշնակի դասեր՝ մասնաւոր վճարումներով։

Աշակերտք եւ աշակերտուհիք պիտի մասնակցին գրական, գիտական եւ երաժշտական երեկոյթներու, որոնք պիտի կազմակերպուին յառաջիկայ շրջանին, յօգուտ բարենպատակ ձեռնարկներու, եւ որոնք պիտի ծառայեն՝ միեւնոյն ատեն իբր գործնական դասեր՝ վարժեցնելու ուսանողները հանրային կեանքի պարտականութեանց։

Ֆիզիքական մարզանքներու համար մասնաւորապէս պիտի ընտրուին անգղիական խաղեր։ Ծախքը վճարող աշակերտները պիտի կրնան հետեւիլ նաեւ թիավարութեան եւ նշանառութեան փորձերու։

Վարժարանս հաստատուած ըլլալով քաղաքին ամենէն մաքուր եւ օդասուն մասին մէջ, կը լրացնէ առողջապահական ամէն պայմանները։ Կարգապահութիւն, մաքրութիւն, խնամուած սնունդ եւ բժշկական կանոնաւոր այցելութիւնք առողջական լաւագոյն վիճակ մը կապահովեն գիշերօթիկ ուսանողներուն համար։ Փափաքող ծնողաց պատրաստ եմ տալ պատուաւոր եւ հասկցող անձնաւորութիւններու բացարձակ երաշխաւորութիւնը։

Գիշերօթիկ աշակերտուհիներու համար մասնաւոր շէնք յատկացուած է։

Ընդունելութեան պայմաններու եւ աւելի ընդարձակ տեղեկութեանց համար նամակով կամ անձամբ՝ դիմել առ՝

Հիմնադիր–Տնօրէն
Հայկական–Կրթարանի
ԿՐՕՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

——).(——

ՓՈՔՐԵՐԻ ԿՈՉԸ

Անշուշտ "Շարժում„ի ընթերցողները կարդացին Վառնայի աշակերտների նամակը։

Փոքրիկները օգնութիւն են խնդրում. Նրանք ոչ հաց և ոչ զգեստ են ուզում։ Չէ՛, նրանք խնդրում են որ մամուլը պաշտպան հանդիսանայ իրանց արդար դատին. Նրանք խնդրում են որ իրանց չը զրկեն այն ուսուցիչներից, որոնք կարողացել են այդ մատաղ սրտերի մէջ բորբոքել գիտութեան ծարաւը, արծարծել մտաւոր լոյսը, ցանել բարոյական մարդի սերմերը։

* * *

Եթէ մենք անձամբ չը ճանաչէինք այդ մանուկներին սիրելի դարձած ուսուցիչներին, եթէ տարւայ մէջ մի քանի անգամ այցելած չը լինէինք այդ ուսուցիչների դասերին, որոնք ամենակարեւոր առարկաներն էին աւանդում, այն ժամանակ այդ աշակերտների նամակը մեզ համար այնքան էլ նշանակութիւն չը պէտք է ունենար։ Այսօր փոքրիկներին օգնելու այդ հրաւէրը մեզ վրայ բարոյական պարտականութիւն է դնում մեր կողմից կրկնել, որ արձակուած այդ երեք ուսուցիչները արժանի են սիրվելու իրանց աշակերտներից և արժանի գնահատվելու հասարակութեան կողմից։

Նրանց արձակելու համար կամ խենթ պէտք է լինել, կամ բոլորովին տգէտ, կամ չօրպաճիական կապրիզներով օժտուած և կամ թէ անկարող այլեւս այդ ուսուցիչներին նիւթապէս վարձատրելու։

* * *

Մենք նպատակ չունենք ուսուցիչների արձակման պատճառները որոնել։

Այդ թէ շատ դժուար է և թէ շատ դիւրին։ Մեզ համար միայն մի բան պարզ է. այն, որ Վառնայի դպրոցի հոգաբարձուները սխալ և մեծ սխալ են գործել։ Նրանք պարտաւոր են այդ սխալը ուղղել. եթէ փոքր ի շատէ խոհուն են և իսկապէս մտածում են մանուկների յառաջդիմութեան մասին։ Ուրիշ բան եթէ այդ մարդիկը աւելի լաւ ուսուցչական խումբ աչքի առաջ ունենային։ Մենք համոզված ենք որ այդպէս չէ. բայց այդպէս չը լինելուց համոզված ենք և նրանում, որ արձակված ուսուցիչների նման ուսուցիչ շատ սակաւ են ամբողջ Բուլղարիայում։

* * *

Մանուկների կրթութեան խնդրի մէջ կրքով, կապրիզներով չէ կարելի ղեկավարվել. առանց հիմնական պատճառների մանուկները զրկել օգտակար ուսուցիչներից, կը նշանակէ մարդասպանութիւն գործել։ Եւ ինչ հոգաբարձութիւն որ կատարում է այդպիսի մի ոճիր, նա դատապարտելի է և արժանի ամբողջ հասարակութեան ատելութեանը։

Մենք կարծում ենք որ Վառնայի հոգաբարձուները այդպիսի մի ոճիր կատարելու ընդունակ մարդիկ չեն և յոյս ունենք որ նրանք իրանց սխալը կուղղեն։

Ուսուցիչները հարկաւոր են երեխաներին և նրանցից գոհ պէտք է լինեն իրանք երեխաները, նրանց ծնողները և հասարակութեան հասկացող մասը։ Այդ երեք տարրն էլ գոհ են արձակված ուսուցիչներից։

ՎԱՐԴՕ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Թաւրիզ, 11 Յուլիս

Լիլաւա թաղի ուսուցչական խումբը մի տարի պաշտօնավարելով, մայիսի վերջերումը տարեկան հանդէսը ունեցաւ։ Երեւաց որ նախորդ ուսուցչական մարմինը շատ անբարեխիղճ կերպով է պաշտօնավարած և դպրոցը պարզապէս մի ախոռի վերածած։

Ուրիշ առթիւ գրել էինք թէ ներկայ վարչութիւնը քննութիւնների փաստակարութիւնը և աչքակապութիւն լինելը նկատի ունենալով՝ հրապարակային քննութիւն չը կատարեց. միայն ամիսներ առաջ ծնողներին և առհասարակ հայ հասարակութեան հրաւէր կարդաց, որ դասերի ներկայ գտնուին և ծանօթանան դպրոցի վիճակի, երեխաների ընդունակութեան և դասաւանդութեան եղանակի հետ։

Մեր ճանճային գորտերը կըռկռոց բարձրացրին քննութիւն չը կատարելու դէմ ու ծաղրելի դարձան նոյնիսկ իրանց խօսքերով և ծիծաղելի տրամաբանութեամբ. Ուղիղն ասած, այս իմաստակները մեր ծիծաղից աւելի, արժանի են մեր արգահատանքին, որովհետեւ իրանց տգիտութիւնը չը հասկանալու չափ տգէտ են.՜.՜.՜

Լիլաւա թաղի երկսեռ վարժարանների բարեխիղճ խումբը, հակառակ թշնամիների ձրի ղըրպարտութեանց, աչքակապութիւն չանելը և ժողովրդի աչքին թօզ փչած չը լինելը ապացուցեց իրա օրինակելի հանդէսով, որից յայտնվում է թէ իր խնամքին յանձնուած 244 երկսեռ աշակերտներից փոխել են 56 0/0 տղաներից և 54 0/0 աղջիկներից։ Ուսուցչական խումբը ունեցել է 43 մանկավարժական ժողովներ։ Զանազան բանաւոր պատճառներով 63 դաս թէև բաց մնացած է, սակայն եթէ հաշւենք կամովին աւելի տրուած 48 դասերը, կունենանք 15 ժամ բաց, որ նշանակութիւնից զուրկ է. Տղայոց դպրոցը ունի 6 դասարան և աղջկանցը 4. ուզում են այս տարի մի դասարան եւս աւելացնել աղջկանց համար։

Ուրախ ենք, որ ներկայ հոգաբարձութիւնը գնահատելով ուսուցչական խմբի տուած արդիւնքը և բարեխղճութիւնը, յաջորդ տարվայ համար եւս վարձեց նոյն խումբը, հակառակ զանազան փողոցային երախաների և փողոցային բարբաջանքների։

Լսում ենք, որ Ղալայ թաղի պատուարժան՝ հոգաբարձութիւնը, որը այս տարի ընտրվեց և ընտրված օրից համարձակվեց նկատողութիւններ անել նոյն թաղի ուսուցիչներից ոմանց անարժանութեան և անյարմարու-

թեան վրա, այժմ մտադրվում է վարձել դարձեալ նոյն խումբը ամբողջութեամբ.՝.՝.՝։ Մենք չենք մեղադրում հոգաբարձուներին, իրանց այս փոփոխամտութեան համար, որովհետեւ Թաւրիզում միշտ փչում են փոփոխական քամիներ, և բնականաբար հոգաբարձութիւնն էլ զերծ չէ լինում այդ քամիների ազդեցութիւնից։ Մենք միայն ցաւում ենք թէ հոգաբարձուների անընդունակութեան, տգիտութեան վրա, և թէ խեղճ մատաղ երեխաների վրա, որոնց ապագան տարաբաղդաբար խաղալիք է դառնում անընդունակ ուսուցիչների ձեռքումը...։

ՄԻՐՋԱ.

Բարիզ, 17 Յուլիս

Հոլանտայէ երկրորդ վերադարձին, Պ. Զերազի հետ տեսակցութիւն մը ունեցայ։ Պատահած զանազան դէպքերուն մէջէն, երկու բան աւելի վիշտ պատճառած են իրեն։ Առաջին սա պարագան թէ, ամէն անգամ որ ընկերութեան մէջ փորձած է նպաստաւոր գաղափար ներշնչել հայոց մասին, գտնուած են եւրոպացիներ որոնք, յայտնելով թէ ճանաչուած են Արեւելքի մէջ, սաստիկ պարուսած են «հայ վաճառականներն իբր խարդախ և թուրք գիւղացիէն պակաս բարոյականի տէր»։ Երկրորդ սա պարագան թէ Գ. Արփիարեան անուն Պոլսեցի երիտասարդ մը, լրագիրներէն տեղեկանալով թէ Պ. Զերազ կը չանայ Հոլանտական ազգին համակրանք ներշնչել հայոց նկատմամբ, մինչեւ Լահէ և Ամսդէրտամ գացեր է այդ համակրանքէն իրեն նիւթական շահ հանելու համար։ Նախ դիմեր է Լահէի Քրիստոնէական Երիտասարդութեան Ընկերութեան, որոյ առջեւ պիտի բանախօսէր Պ. Զերազ, և յետոյ Ամսդէրտամի Համանուն Ընկերութեան, և առնոնցմէ տեղեկանալով Պ. Զերազի դիմած անձնաւորութեանց հասցէները, ինք ալ անոնց դիմած է դրամ և պաշտօն հայցելու համար, նոյնիսկ ի ներկայութեան Պ. Զերազի։ Աւելի ցաւալին կայ. Բարիզի հայ բախտախնդիրներէն ոմանք, «Շարժումի», «Իրաւունքի» և «Լ'Ամէնիի» մէջ կարդալով թէ Հոլանտայի կը համակրին հայոց, կը պատրաստուին Լահէ և Ամսդէրտամ երթալ և Արփիարեանի ընթացքին հետեւիլ։ Խաչագողութեամբ և մասամբ նորին։

Z

Պոսդոն, 10 Յուլիս

Շէյխ-Օրմանեանի ընթացքը մեծ զայրոյթ յարուց Ամերիկայի հայոց մէջ։ Ժողովուրդը բարկութենէն քիչ կը մնար այդ վատահամբաւ հեռագիրը պարունակող հայ թերթերը բզկտէր։ «Հայրենիք» թերթը խմբագրականով մը կը թելադրէ որ «չը յիշուի»ն հոս ալ գործադրուի. սակայն ես հաւատք չունիմ որ գէթ այդքան մը անպատուի Օրմանեան հոս, քանի որ Սարաճեան եպիսկոպոսն ունինք առաջնորդ։ Այս կղերականը Օրմանեանի հլու հպատակն է և անոր կամակատարը։ «Նոր Կեանք»ի գովեստները որոնք Սարաճեանը հերոսացուցին յաչս վերակազմեալ հնչակեաններու, նոր չարիքներու պատճառ եղան։ Մեր հնչակեան ընկերները, որոնք միշտ հետեւողի դեր կը կատարեն, անսալով «Նոր Կեանք»ին ամէն բան «յոտս նորին սրբազնութեան» կը դնեն և խնդիրը աեղն ի տեղ կը մեռցուցեն։ Խաղաղութեան Դեսպանաժողովին ակերսագրեր ղրկելու միջոցներ ձեռք առինք, տեղական թերթերու մէջ գրեցինք, ժողովներ կազմելու ձեռնարկեցինք և ահա, եպիսկոպոսին սիրահար հայ խմբագիր մը «Պարսկաստանի նախկին առաջնորդին» ձգեց խնդիրը ու... մեռուցին։

Երկու ամիս առաջ ալ յեղափոխական մի կարեւոր խնդիր՝ որ պիտի կատարուէր դաշնակցականներու և վերակազմեալներու համերաշխութեամբ, մեր «գաղտնի գործող» բարեկամներ եպիսկոպոսին կը խոստովանին և անոր աջակցութիւնը կը խնդրեն։ Օրմանեանի ձագը վարպետութեամբ մը կը խոստանայ իր աջակցութիւնը... չը գործադրելու պայմանաւ. և խոստովանանքը այսօր հրապարակի վրայ կը խօսուի։ Սարաճեանը հոգաբարձուներուն կը ասէ, անոնք ալ իրենց մտերիմներուն և որ ըսա կարգի։ Ահա այս է մեր «խոհեմ» յեղափոխականներու գաղտնապահութիւնը... Օրմանեանի ձագին հաղորդել յեղափոխական գաղտնիքներ։ Վերակազմեալներ հոս հոն կը խօսին թէ Մարսիլիոյ Թերթիկի խմբագիրն հոս պիտի գայ և թէ իրենք պիտի միանան։

Ուրախ եմ որ կը միանան. բայց կը ցաւիմ որ «գաղտնի գործենք» կը պոռան և իրենց ձայնը մինչև իրենց ականջը չը հասնիր։

ԼԷՕ

Իզմիր, 10 Յուլիս

Նախորդ ամսոյ 21ին սկսան վարժարանիս տարեկան սովորական հարցաքննութիւնները և վերջացան նոյն ամսոյ 26ին. երկսեռ աշակերտները բաւականին լաւ էին, մանաւանդ փոքրիկները, որոնք սահուն հայերէնով մը կը պատասխանէին իրենց ուղղուած մէն մի հարցումին։ Մարդ որչափ գոհունակութիւն կը զգայ, երբ կը տեսնէ թրքախօս և հայերէն բառ մը իսկ արտասանել չը գիտցող հայ մանուկներ այսօր, առանց բացառութեան, մաքուր հայերէն կը խօսին։ Քաղաքիս հայ գաղթականութեան անցեալ ազգային և դպրոցական կեանքը կարի տխուր եղած է. նոյն նահատակուած սերունդը՝ որ ներկայ երիտասարդութիւնը կը կազմէ, իր պիտանի ժամերը բոլորովին յումպէտս վատնած է. և այդ երիտասարդութիւնն է որ այսօր ո՛չ ազգային կեանքով կը զբաղի, և ո՛չ անոր վրայ կը խորհի. անոր ամբողջ կեանքը կը կազմեն զբօսանքները։ Արդ կրկին ըլլալով կոչում կընենք մեր երիտասարդութեանը սթափիլ, գործել և հետաքրքրուիլ ազգային և դպրոցական կեանքով, զի պէտք

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՔՆՆՈՒԹԵԱՆՑ ՎՆԱՍՆԵՐԸ

—

Գ.

Դարուս քաղաքակրթութեան կամ մարդկային ընկերութեան ներկայ կազմակերպութեան գլխաւոր չարիքներէն մին է մաքի տարապայման յոգնութիւնը (սիւրմնաժ), եւ Պէար կենսախօսը չատ իրաւունք ունի երբ՝ երկարակեցութեան եւ առողջութեան համար մաքի չափաւոր աշխատութիւնը ընդունելով հանդերձ կը յայտնէ թէ մարդկային ազգի քաղաքակրթութեան համընթաց կը զարգանայ նաեւ անոր ջըղայնականութիւնը (նեւրոթիզմ)։

Երանելի են հին յոյներն ու հռոմէացիները, որոնք մատաղ սերնդի դաստիարակութեան համար Զենս-Ա-վեստաի «առողջ միտք՝ յառողջ մարմնի» իմաստալից առածը իրենց նշանաբան ընտրած էին։ Սակայն քրիստոնէութեան եւ հոգեպաշտ իմաստասիրութեան տարածմամբ շուտով մարմինը իր յարգը կորսնցուց ի՛ւ՛նչպէս մաքին որ՝ բանդագուշելու ասպիճան յոգնելու դատապարտուեցաւ հոգին ազնուացնելու համար։

Իրաւ է թէ միջնադարեան խաւարէն յետոյ վերածնութիւնը իր լոյսը սփռեց, Պաքոն եւ Հում իմաստասէրները փորձառական մէթոտը ստեղծեցին, գիտութիւնները հսկայաքայլ ուկսան զարգանալ եւ ամէն մարդ հասկցաւ մտաւորին չափ ֆիզիքական կրթութեան ալ անհրաժեշտ պէտքը. իրաւ է թէ Լոքէի եւ Ռուսօի օրինակին հետեւելով բոլոր մանկավարժները այդ կարծիքը՝ երբեմն Սպէնսէրի պէս չափազանցութեան հասցնելով իսկ պաշտպանեցին, սակայն չյաջողեցան հին սխալը բոլորովին դարմանել, վարժարանները այդ աւանդականութենէն ազատել։

Կրօնական նախապաշարումներն ու հին համոզումները մարդկային ազգը խոշտանգելու զօրութիւններին կորսնցուցած են այսօր, բայց անոնց փոխարէն ընկերութեան ներկայ կազմակերպութեան տնտեսական պայմանները, գոյութեան կռիւը մղելու համար մրցման յորդրութիւնն է որ մարդս չարունակական յուզումներու կենթարկէ եւ անոր միտքը միշտ լարուած, միշտ գործօն վիճակի մէջ պահելով առողջութեանը կը վնասէ։

Երկար կըլլար հոս բացատրել այս գերազանցապէս գիտական դարուս մէջ մաշինիզմի զարգացման հետ մարդկային գործունէութեան ի՞նչ կտտանքի ենթարկուած ըլլալը։ Այսօր մաքի տարապայման յոգնութիւնը այնքան ընդհանուր չարիք մըն է որ՝ անկէ զերծ չէ նոյնիսկ վարժարաններու մէջ գիտական մէթոտներով եւ առողջապահիկ կանոններու համաձայն կրթուելիք մատաղ սերունդը։

Առաջին անգամ Նուրէնպէրկի մէջ առողջապահական ժողովի մը առջեւ Ֆինքէլնպուրկ բրոֆէսօրն է որ մասնաւոր ըրած է դպրոցական տղոց մտաւոր սիւրմնաժի վնասները եւ անկէց ի վեր քաղաքակիրթ երկիրներու մէջ մատաղ սերունդի կրթութեամբ հետաքրքրուող գիտուններու մտահոգութեան առաջին առարկան այդ եղած է։ Այնքան կենսական էր խնդիրը, որ անմիջապէս ամբողջ գրականութիւն մը ստեղծուեցաւ այդ նիւթին վրայ եւ այժմ բացարձակապէս հաստատուած է թէ՝ իրենց մօր գրկէն, ընտանեկան ազատ կեանքէն խլուած եւ վարժարան բերուած մանուկները թէեւ սկիզբները մեծ անհանգստութիւն չեն զգար, բայց քանի մը տարի լարուած աշակերտութեամբ եւ մտաւոր տարապայման աշխատութեամբ վերջապէս կը յոգնին ու կը սպառին։

Աքզել Բէյի պէս համբաւաւոր կենսախօսներու եւ Պալանդէնի նման մանկանց հիւանդութեան հեղինակաւոր բժիշկներու քննութիւններէն յայտնի կերեւի որ, առանց նկատի առնելու բարոյական տեսակները, վարժարաններու մէջ տղաք բազմաթիւ եւ բազմատեսակ հիւանդութեանց կենթարկուին իրենց կրած մտաւոր յոգնութեան պատճառաւ։

Հոս միաք չունիմ ազայոց մտաւոր սիւրմնաժը նկարագրել, զայն այսքանով յիշատակելն ալ բաւական է հասկցնելու համար թէ՝ երբ եւրոպական կանոնաւոր վարժարաններն իսկ զերծ չեն այդ չարիքէն, երբ Շուէյցի, Տանըմարքայի, Գերմանիոյ պէս քաղաքակիրթ երկիրներու մէջ՝ աշակերտներու հարիւրին քառասունը մտաւոր յոգնութենէ վնասուածներ են, երբ Միացեալ Նահանգներու մէջ ցեղի ֆիզիքական ու բարոյական տկարացման վախը կզգան աշակերտուհիներու մտաւոր յոգնութեան պատճառաւ, ինքնին կը հասկցուի թէ՝ մեր մէջ որքան մեծ ու խոր ըլլալու է չարիքը եւ մեր ազգը մինչեւ հիմա ֆիզիքապէս ու բարոյապէս որքան տուժած ըլլալու է, մեր կրթական բարբարոս մէթոտներով, խոր աւանդականութեամբ եւ համբակ ուսուցիչներով կառավարուող վարժարաններու չնորհիւ։ Ամենուս մաքին մէջ թարմ է դեռ մեր պատուելիներու հաւատքնական տանջանքներուն չափ սոսկում ազդող՝ դպրոցավարութեան եւ դասաւանդութեան եղանակներու յիշատակը։ Մեր օրերու վարժարանները մեծ տարբերութիւն չունին անոնցմէ. ուրիշ ձեւի տակ նոյն հին մէթոտներն ու աւանդութիւններն են որ կը չարունակեն, ու մեր այսօրուան հրապարակային

է գիտնալ որ տգիտութեան դարը վաղուց անցած է, և արատ այն երիտասարդութեան ճակատին որ չընէր այն ամէնը, ինչ որ յօգուտ ազգին և վարժարանի է։

Այն օրէն ի վեր՝ երբ պաշտօնի կոչուած են ներկայ թաղականութիւնը ու հոգաբարձութիւնը, իրենց կէտ նպատակն եղած է վարժարանիս յառաջդիմութիւնը և եկեղեցւոյ բարեշարժութիւնը։ Իրենց ամբողջ պաշտօնավարութեան շրջանին մէջ, ունեցած են կանոնաւոր ընթացք մը և համերաշխ գործունէութիւն մը։ Հեռու անձնական կիրքերէ, ուշադրութիւններին դարձուցած են միմիայն եկեղեցական կալուածոց և հասոյթից յաւելման, որոնց գոյութեամբը միայն կանգուն պիտի մնայ վարժարանը։ Արդէն եղածներու վրայ վերջերս շինուեցան նաեւ եկեղեցւոյ կից երեք հատ քարուկիր խանութներ, որոնք տարեկան մօտ 30 ոսկւոյ գումար մը կը խստանան. սրշափ որ իրենց պիւտճէն չներեր, բայց և այնպէս մինչեւ ցայսօր կանոնաւորապէս վճարած են և կը վճարեն պաշտօնէից ամսաթոշակները, գիտնալով որ կանոնաւոր վճարում մը որչափ մեծ դեր կը կատարէ դպրոցական գործին մէջ և ի՞նչ ազդեցութիւն կը բերայ ունենալ պաշտօնէից վրայ։ Ազգային այս աշխատաւոր պաշտօնէից հետ միացած են նաեւ մեր երկու ուսուցիչները. արդարեւ անուրանալի են առոնց չանքերը, անոնք իրենց եսը գործածած են ու կը գործածեն միմիայն վարժարանի յառաջդիմութեան համար։

Մարմնոյ կենդանի մասնիկները կամ Վիրխովի խօսքով կեանքի միութիւնները ձեւացնող բջիջները բոլորն ալ նի թէ կազմուած են, արդ՝ նիւթը կենսական գործողութիւնները յառաջացնելու համար չարունակ իր բաղկացութիւնը կը փոխէ, կսպառի, եւ յօդնութիւնը կարծուածին պէս բջիջներու օքսիտացման կամ արեան ածխային թթուով բեռնաւորման արդիւնք չէ. այլ թունաւոր թթուներու եւ վնասակար նիւթերու արտադրման հետեւանք է, որոնք մեր մարմինը կազմող բջիջներու կեանքի միջավայրը կաղարտեն եւ մկանունքի ուղեղային հիւսուածքին յատկութիւնները կը փոխեն։ Երկար կըլլար հոս յօդնութեան եւ ուղեղի ու մկանանց գործունէութեան կենսախօսութիւնը ընել. միայն սաչափը ըսեմ որ մեր մարմնի բջիջներուն դուրս առած ճշմարիտ կղկղանքները սովորաբար թթուածնի միջոցաւ արիւնին մէջ կայրին կամ լեարդին մէջ կը քայքայուին եւ երիկամանց միջոցաւ կարտաքսուին։ Եթէ այդ վնասակար նիւթերու քանակը արեան մէջ չատնայ մենք յօդնութեան զգացողութիւնը կունենանք. իսկ եթէ անոնք չափազանց չատ ըլլան մենք հիւանդ կըլլանք։

Արդ՝ մանուկները որոնց մանաւանդ ուղեղային բջիջները մատաղ հասակի մէջ դեռ չատ թոյլ, չատ կակուղ եւ վերին աստիճան դիւրազգեալի են, մեծապէս կը վնասուին եւ իրենց մտքի կարողութիւնները զգալապէս կը տկարանան եւ հետեւաբար ունենալիք բարոյական կորովնին ալ կը նուազի երբ զանոնք սաստիկ յուզումներու եւ տարապայման յօդնութեան ենթարկենք. թող կենսական ուրիշ գործարաններու կրած խանգարումները։

Աչակրանները, դպրոցական տարեշրջանի վերջերը, այսինքն ասոնց ամենէն աւելի տկար եղած պահուն, քննութեանց պատրաստակաւ տաժանելի աշխատութեանց, յուզումներու եւ մտահոգութեանց ենթարկել՝ կը նշանակէ զանոնք սաստկապէս յոգնեցնել, անոնց առողջութիւնը մեծապէս խախտիլ։

Գնդապետ Երաճի կըսէ թէ՝ հարցաքննութեանց պահանջած մտքի տարապայման յօդնութեան առողջ եւ հուժկու զինուորներն իսկ չեն կրնար տոկալ, գրիչը ձեռքերնին կը դողդղայ եւ սաստիկ կը քրտնին. անոնցմէ չատերը նոյնիսկ ժժգունելով կը մարին, այնքան մեծ է իրենց կրած յուզումներն ու յոգնութիւնը պարզ հարցաքննութեան մը պահուն իսկ։

Քննութիւններու առթիւ ուղեղի խիստ լարուած եւ գործօն վիճակը անբուժելի գլխու ցաւերու, խելքի պտոյտներու, ականջի եւ աչքերու հիւանդութեանց պատճառ կըլլայ։ Բազմաթիւ օրինակներ անժխտելի կերպով կը հաստատեն թէ՝ քննութեանց առթիւ մտաւոր սաստիկ յոգնութեամբ ուղեղի սպառումը չատ խելացի եւ առողջ աչակերտներու, եւ նոյնիսկ երիտասարդ եւ չափահաս անձերու մտքի կարողութիւնները կը տկարացնէ, զանոնք ո եւ է կարեւոր աշխատութեան անընդունակ կընէ։

Յօդուածս աւելի չերկարելու համար չեմ ուզեր հրապարակային քննութեանց ներկայացող աչակերտի մը հոգեբանութեան մէջ մտնել, անոր կրած յուզումներն ու գործարաններու կենսախօսական փոփոխութիւններն նկարագրել։ Չէ՞ք տեսներ թէ անիկայ ինչպէս կը ժժգունի քիչ մը ետքը սաստիկ կարմրելու համար, ինչպէս անոր մորթային բարեխառնութիւնը կը նուազի վայրկեանէ մը բարձրանալու համար. չէ՞ք նկատեր թէ ի՞նչպէս սիրտը սաստիկ բաբախել, ձայն ու ձեռքերը դողդղալ կսկսին. խեղճը այդ յուզուած՝ գրգռուած վիճակին մէջ օրերով հանգիստ քունէն եւ լաւ ախորժակէն ալ կը զրկուի։

Երբ չափահաս ու առողջ մարդիկ անզամ չեն կրնար առնել հրապարակային հարցաքննութեանց պատճառած յուզումներն ու յոգնութիւնները, ի՞նչպէս կուզենք որ մեր պզտիկները աւելի տկար ըլլալով՝ առանց վնասուելու դիմանան այդ բոլորին եւ ի լրումն կատակերգութեան կամ լաւ եւս ողբերգութեան, մտաւոր այս կամ այն կարողութիւններն ալ զարգացնելու ճգնին։

Եթէ խիզճ չունինք եւ հաճոյք կզգանք անմեղ մանուկները անօգուտ տեղ չարչարելէ, չարունակենք մեր հրապարակային քննութիւնները՝ որոնց ներքոյ կարդալէ չգիտի դադրին տգիտութեան կուսակիցները. իսկ եթէ մանկանց դահիճ ըլլալու փափաքող չենք եւ մեր ցեղի ազնուացման եւ զօրացման մատաղութիւնը ունինք, կուզինք այդ վնասակար աւանդականութեան դէմ եւ հաստատեցէք որ ճշմարտապէս ազգասիրական եւ մարդասիրական գործ մը կատարած պիտի ըլլանք։

Կ. Պիօն

——)·(——

է գիտնալ որ տգիտութեան դարը վաղուց անցած է, և արատ այն երիտասարդութեան ճակատին որ չընէր այն ամէնը, ինչ որ յօգուտ ազգին և վարժարանի է։

Այն օրէն ի վեր՝ երբ պաշտօնի կոչուած են ներկայ թաղականութիւնը ու հոգաբարձութիւնը, իրենց կէտ նպատակն եղած է վարժարանիս յառաջդիմութիւնը և եկեղեցւոյ բարեշարժութիւնը։ Իրենց ամբողջ պաշտօնավարութեան շրջանին մէջ, ունեցած են կանոնաւոր ընթացք մը և համերաշխ գործունէութիւն մը։ Հեռու անձնական կիրքերէ, ուշադրութիւններին դարձուցած են միմիայն եկեղեցական կալուածոց և հասոյթից յաւելման, որոնց գոյութեամբը միայն կանգուն պիտի մնայ վարժարանը։ Արդէն եղածներու վրայ վերջերս շինուեցան նաեւ եկեղեցւոյ կից երեք հատ քարուկիր խանութներ, որոնք տարեկան մօտ 30 ոսկւոյ գումար մը կը խստանան. սրշափ որ իրենց պիւտճէն չներեր, բայց և այնպէս մինչեւ ցայսօր կանոնաւորապէս վճարած են և կը վճարեն պաշտօնէից ամսաթոշակները, գիտնալով որ կանոնաւոր վճարում մը որչափ մեծ դեր կը կատարէ դպրոցական գործին մէջ և ի՞նչ ազդեցութիւն կը բերայ ունենալ պաշտօնէից վրայ։ Ազգային այս աշխատաւոր պաշտօնէից հետ միացած են նաեւ մեր երկու ուսուցիչները. արդարեւ անուրանալի են առոնց չանքերը, անոնք իրենց եսը գործածած են ու կը գործածեն միմիայն վարժարանի յառաջդիմութեան համար։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Տեղական թերթի մը մէջ կարդացի յօդուած մը որ՝ իբրեւ քաղաքիս հայոց ազգ. վարժարաններու դասատու, իմ մասիս սխալ եւ թշնամական ոգւով գրուած տեղեկութիւններ կը պարունակէր։ Ցիշեալ յօդուածով ես կամբաստանուիմ իբրեւ անկարող, պուլկարերէնը հին մէթոտով աւանդող դասատու, թէ եւ Պ. յօդուածագիրը չհաճիր իմ անկարողութիւնս փաստել կամ հին ու նոր մէթոտ ըսելով ի՞նչ հասկնալը բացատրել։

Կը ցաւիմ որ յիշեալ թերթի խմբագրութիւնը բոլորովին սխալ տեղեկութիւններ պարունակող այդ տեսակ գրութիւն մը կը հիւրընկալէ, առանց տեղեակ ըլլալու թէ յօդուածագիր պարոնը ի՞նչ պոչի ցաւէ դրդուած գրած է իր վճիռները իմ մասիս։ Պ. Շապուհ ծածկանունին տակ թաքչող մարդը՝ իմ զբաղած պահուս անքաղաքավար եւ անկարգ վարմունք մը ունենալուն համար, քննութիւնները իրենց աղեսալի հետեւանքներով կրնան մրցիլ պատուելիներու փաղախային եւ Նարեկի, գործոցի ընթերցանութեան հետ։

Մեր խեղճ ողաքը բաւական չէ որ ամբողջ դպրոցական տարեշրջանի միջոցին համբակ ուսուցիչներու ձեռք մտաւոր տաժանքի ենթարկուելով կուժաթափին, անոնք ստիպուած են կրել նաեւ հրապարակային քննութիւն կոչուած կատանքին պատճառած բոլոր յուզումներն, յոգնութիւնները, եւ այն ալ յուլիսի տաք օրերուն վասն ամենամեծ փառացն ուսուցչաց։

Մարմնոյ կենդանի մասնիկները կամ Վիրխովի խօսքով կեանքի միութիւնները ձեւացնող բջիջները բոլորն ալ նի թէ կազմուած են, արդ՝ նիւթը կենսական գործողութիւնները յառաջացնելու համար չարունակ իր բաղկացութիւնը կը փոխէ, կսպառի, եւ յօդնութիւնը կարծուածին պէս բջիջներու օքսիտացման կամ արեան ածխային թթուով բեռնաւորման արդիւնք չէ. այլ թունաւոր թթուներու եւ վնասակար նիւթերու արտադրման հետեւանք է, որոնք մեր մարմինը կազմող բջիջներու կեանքի միջավայրը կաղարտեն եւ մկանունքի ուղեղային հիւսուածքին յատկութիւնները կը փոխեն։ Երկար կըլլար հոս յօդնութեան եւ ուղեղի ու մկանանց գործունէութեան կենսախօսութիւնը ընել. միայն սաչափը ըսեմ որ մեր մարմնի բջիջներուն դուրս առած ճշմարիտ կղկղանքները սովորաբար թթուածնի միջոցաւ արիւնին մէջ կայրին կամ լեարդին մէջ կը քայքայուին եւ երիկամանց միջոցաւ կարտաքսուին։ Եթէ այդ վնասակար նիւթերու քանակը արեան մէջ չատնայ մենք յօդնութեան զգացողութիւնը կունենանք. իսկ եթէ անոնք չափազանց չատ ըլլան մենք հիւանդ կըլլանք։

Արդ՝ մանուկները որոնց մանաւանդ ուղեղային բջիջները մատաղ հասակի մէջ դեռ չատ թոյլ, չատ կակուղ եւ վերին աստիճան դիւրազգեալի են, մեծապէս կը վնասուին եւ իրենց մտքի կարողութիւնները զգալապէս կը տկարանան եւ հետեւաբար ունենալիք բարոյական կորովնին ալ կը նուազի երբ զանոնք սաստիկ յուզումներու եւ տարապայման յօդնութեան ենթարկենք. թող կենսական ուրիշ գործարաններու կրած խանգարումները։

Աչակրանները, դպրոցական տարեշրջանի վերջերը, այսինքն ասոնց ամենէն աւելի տկար եղած պահուն, քննութեանց պատրաստակաւ տաժանելի աշխատութեանց, յուզումներու եւ մտահոգութեանց ենթարկել՝ կը նշանակէ զանոնք սաստկապէս յոգնեցնել, անոնց առողջութիւնը մեծապէս խախտիլ։

Գնդապետ Երաճի կըսէ թէ՝ հարցաքննութեանց պահանջած մտքի տարապայման յօդնութեան առողջ եւ հուժկու զինուորներն իսկ չեն կրնար տոկալ, գրիչը ձեռքերնին կը դողդղայ եւ սաստիկ կը քրտնին. անոնցմէ չատերը նոյնիսկ ժժգունելով կը մարին, այնքան մեծ է իրենց կրած յուզումներն ու յոգնութիւնը պարզ հարցաքննութեան մը պահուն իսկ։

Քննութիւններու առթիւ ուղեղի խիստ լարուած եւ գործօն վիճակը անբուժելի գլխու ցաւերու, խելքի պտոյտներու, ականջի եւ աչքերու հիւանդութեանց պատճառ կըլլայ։ Բազմաթիւ օրինակներ անժխտելի կերպով կը հաստատեն թէ՝ քննութեանց առթիւ մտաւոր սաստիկ յոգնութեամբ ուղեղի սպառումը չատ խելացի եւ առողջ աչակերտներու, եւ նոյնիսկ երիտասարդ եւ չափահաս անձերու մտքի կարողութիւնները կը տկարացնէ, զանոնք ո եւ է կարեւոր աշխատութեան անընդունակ կընէ։

Յօդուածս աւելի չերկարելու համար չեմ ուզեր հրապարակային քննութեանց ներկայացող աչակերտի մը հոգեբանութեան մէջ մտնել, անոր կրած յուզումներն ու գործարաններու կենսախօսական փոփոխութիւններն նկարագրել։ Չէ՞ք տեսներ թէ անիկայ ինչպէս կը ժժգունի քիչ մը ետքը սաստիկ կարմրելու համար, ինչպէս անոր մորթային բարեխառնութիւնը կը նուազի վայրկեանէ մը բարձրանալու համար. չէ՞ք նկատեր թէ ի՞նչպէս սիրտը սաստիկ բաբախել, ձայն ու ձեռքերը դողդղալ կսկսին. խեղճը այդ յուզուած՝ գրգռուած վիճակին մէջ օրերով հանգիստ քունէն եւ լաւ ախորժակէն ալ կը զրկուի։

Երբ չափահաս ու առողջ մարդիկ անզամ չեն կրնար առնել հրապարակային հարցաքննութեանց պատճառած յուզումներն ու յոգնութիւնները, ի՞նչպէս կուզենք որ մեր պզտիկները աւելի տկար ըլլալով՝ առանց վնասուելու դիմանան այդ բոլորին եւ ի լրումն կատակերգութեան կամ լաւ եւս ողբերգութեան, մտաւոր այս կամ այն կարողութիւններն ալ զարգացնելու ճգնին։

Եթէ խիզճ չունինք եւ հաճոյք կզգանք անմեղ մանուկները անօգուտ տեղ չարչարելէ, չարունակենք մեր հրապարակային քննութիւնները՝ որոնց ներքոյ կարդալէ չգիտի դադրին տգիտութեան կուսակիցները. իսկ եթէ մանկանց դահիճ ըլլալու փափաքող չենք եւ մեր ցեղի ազնուացման եւ զօրացման մատաղութիւնը ունինք, կուզինք այդ վնասակար աւանդականութեան դէմ եւ հաստատեցէք որ ճշմարտապէս ազգասիրական եւ մարդասիրական գործ մը կատարած պիտի ըլլանք։

Կ. Պիօն

——)·(——

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Ֆիլիպէ լուր տարածուած է թէ Օրմանեան, Արթին փաշա և Սուլթանը որոշած են պատուիրակութիւն մը հանել արտասահման, որպէս զի ստորագրութիւն հաւաքէ հայ վաճառականներէն՝ գոհունակութիւն յայտնելու համար Օրմանեանի քաղաքականութեանն և Լահէի Վեհաժողովին առթիւ կազմած միթինկները մի քանի սրիկաներու գործը ցուցընելու համար։

Թող գայ պատուիրակութիւնը և դիմէ վաճառականներուն։ Սրիկաներն ալ զիրենք կը ցուցնեն։

— Էջմիածնի Սինոդը որոշած է յայտնել Թիֆլիզի Ներսէսեան դպրոցի հոգաբարձութեան, որ դպրոցի հսկողութեան տակ եղած բոլոր ուխտատեղիները առանց պատճառաբանութեան և յետաձգութեան յանձնուին հոգեւոր իշխանութեան։ Հոգաբարձութիւնը իր առաջիկայ նիստին մէջ պիտի կայացունէ իր որոշումը։

— Էջմիածնի Ճեմարանի տեսուչ Կոստանեան հրաժարած է։ Անոր տեղ նշանակուած է համալսարանական Կարապետ վարդապետ։

Առաջինը բանի պէտք չէր, երկրորդը տեսնանք։

— Դամառ Քաթիպայի մահարձանի համար հաւաքուած գումարը հասած է 2010 բուպլիի, հաւաքումը դեռ կը շարունակուի։

— Վառնայի եկեղեցւոյ նորակազմ դպրաց դասը, վաղը առաջին անգամ ըլլալով պիտի կատարէ պատարագի արարողութիւնը եռաձայն, առաջնորդութեամբ դպրապետ Պ. Ց. Վարդապետեանի։

— Պուրկազի մէջ յուլիս 18ին, կիրակի օր, Ունճեանի կողմնակիցները եկեղեցւոյ բակին մէջ ծեծած են նախկին ուսուցիչ Տուրսունեանը։

— Վառնայի նախկին Թաղ. Խորհուրդը՝ դպրոցի շինութեան պատճառով 2,227 ֆր.ի պարտք թողած է մուրհակով ։

Պարտատէրը դատարանին դիմած ըլլալով՝ դատարանը կոչնագիր ղրկած է նախկին Թաղ. Խորհուրդի անդամներուն, և ժամանակ տուած է անոնց որ մինչև յուլիսի վերջը ատ գործը կարգադրեն ։

Թաղ. Խորհրդի անդամները դատարանին ղրկած թուղթերուն պատճէնները ղրկած են հոգաբարձութեան և ուսաց քահանային, քանի որ հիմա Թաղ. Խորհուրդ չիկայ ։

Պարտատէրը իր դրամը գանձելու համար, դատարանին մատնացոյց ըրած է աղջկանց վարժարանի դիմացը գտնուած ազգապատկան գետինը գրաւելու ։

Վառնայի հայ հասարակութեան համար մեծ անպատուութիւն է եթէ այդ գետինը, որ քաղաքիս կեդրոնը կը գտնուի և ապագային օգտակար կրնայ ըլլալ դըպրոցներուն, գրաւուի պարտքի փոխան և կամ ծախուի ոչինչ գնով ։

— Ստացած ենք «Բանասէրի» Բ. գիրքը, որ առաջնոյն նման հարուստ պարունակութիւն մը ունի և ուր հայ աշխատակիցներու հետ կերևին նաև օտար հայագէտներ, ինչպէս Օ. Կարիէր և այլք ։

— Ստացանք Պ. Ս. Ամիրխանեանի հրատարակած գիրքը, պատմութիւն Յովհաննէս կոչուած Շուքրիի ։

Այս պատմութիւնը ունենալ փափաքողը թող դիմէ Տ. Ս. Ամիրխանեանցին, Վառնա Պուլկարիա ։

— Ստացանք Պ. Մինաս Չերազի Հոլանտա ըրած գոնֆէրանսներու առթիւ հրատարակուած պրօշիւրը ։ Կաշխատինք բովանդակութիւնը համառօտելով հաղորդել մեր ընթերցողներուն ։

— Աղջկանց Կրթարանի խնամակալութիւնը ներկայիս լուգայ յայտարարել թէ. կրթարանի ուսանողաց վիճակացոյցերու բաշխման հանդէսը տեղի պիտի ունենայ յառաջիկայ երկուշաբթի, 26 Յուլիս 1899, Հաճի Բանաքօյի դիմաց «Կրօղտի» ղբօսարանին մէջ կէս օրէն յետոյ, ժամը 2ին ։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

—

Յառաջիկայ կիւրակի, Յուլիս 25ին, հանդիսաւոր Ս. Պատարագ պիտի մատուցուի քաղաքիս Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ ողբացեալ Օր. Ֆրայզըրի հոգւոյն համար ։

Արդ ներկայիւս կը խնդրենք յարգոյ հասարակութենէն որ բարեհաճին նոյն օրուան մատուցուելիք Ս. Պատարագին ներկայ գտնուիլ ։

Ի դիմաց Թաղ. Խորհրդոյ
Վ. Ատենադպիր — Վ. Ատենապետ
Գ. Կիւլպէնկեան — Յ. Մ. Թովմասեան
Վառնա, 23 Յուլիս 1899

——)·(——

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ամիրալ Դէվին Թրիէսթ հասած ժամանակ Հերալդ լրագրի թղթակցին ըսած է. ճիշդ է որ գերմանացիները մտադիր եղած են միջամտել Ֆիլիպպինեան գործերու մէջ ։ Եւ աւելցուցած է. Բրուսական Հէնրիկ իշխանը, գերմանական նաւատորմի հրամանատարը նոյն տիպի մարդն է, ինչ որ իր եղբայրը կայսրը ։ Գերմանական քաղաքականութիւնն է բոլոր պետութեանց արգելք հանդիսանալ աւելնալու ղայն, ինչ որ իրենք չեն կրնար տիրապետել ։ Ադոր իբր փաստ կրնայ ծառայել Սամօա ։

Մենք մեծ նաւատորմիղի պէտք ունինք, ամէն մեծ պետութեան դիմաց իր ըլլալու համար ։ Անգլիան մեր բնական դաշնակիցն է, և ոչ մի բան չի կրնար պղտորել մեր ունեցած բարեկամութիւնը ։

Մեր ապագայ պատերազմը կըլլայ Գերմանիոյ հետ ։

— Աղեքսանդրիա ժանտախտը կարելի է դադրած համարել, շնորհիւ իշխանութեանց ձեռք առած միջոցներուն ։

— Անգլիական Հնդկաստանի մէջ ժանտախտը սաստիկ է, յուլիս 13ին, 151 հոգի հիւանդացած են, որոնցմէ 121ը մեռեր է ։

— Խաղաղութեան ժողովը գործերը վերջացուցեր է. ժողովականները ցրուած են ։ 19ի առաւօտեան բոլոր պետութիւնները ստորագրեցին վերջնական ակտը. սկսած են ստորագրել երեք պայմանաթղթերը և երեք յայտարարութիւնները ։ Երեք ժամին ժողովը իր բոլոր անդամներով նիստ ունեցեր է ։ Կըսուի թէ 16 պետութիւն ստորագրած են իրաւընտրական դատաստանի պայմանաթուղթը ։

Կարդացուեր է Հոլանտայի թագուհւոյն Պապին գրած մէկ նամակը, որով թագուհին Պապին բարոյական աջակցութիւնը խնդրած էր ժողովին համար ։ Կարդացուած է նաև Պապին գրած պատասխանը որով կը խոստանայ իր աջակցութիւնը ։ Ստալ, Ռուսաց պատգամաւորը և ժողովի նախագահը շնորհակալութեան ճառին մէջ ըսեր է.

Վերջացած գործը այնքան կատարեալ չէ որչափ ցանկալի էր, սակայն անկեղծ է, գործնական և իմաստուն ։

— Սուլթանը իրատէով մը հաստատած է ափային ընկերութեան գներին վերաբերեալ աշխատութիւնը, որով վերջ դրած է ընկերութեան հետ ունեցած վաճառականական գործերու վերաբերեալ դժուարութիւններուն ։

— Անգլիական և ֆրանսական դեսպանները Բ. Դրան նօթա մը տուած են որու մէջ կը խնդրեն աւելի հաշտարար ըլլալ Յունաստանի հետ հիւպատոսական խնդրոյն մէջ, պետութեանց միջամտութիւնը չը հրաւիրելու համար ։ Կարելի է որ շուտով Ռուսական և Իտալական դեսպաններն ալ նոյն քայլը ընեն ։

— Պելճիգացի հռչակաւոր ժեներալ Բրիալմօն, բոլորովին դժգոհ Խաղաղութեան ժողովի արդիւնքէն, իր հայրենակիցներուն խորհուրդ կուտայ լուրջ կերպով զբաղիլ Պելճիգայի պաշտպանութեան խնդիրովը ։ Բրիալմօն «կոչ» մը յայտարարած է որով կը հրաւիրէ զինուորութիւնը պարտադիր ընել, համոզելով որ ներկայ ժամանակին Անգլիոյ երաշխաւորութիւնը բաւական չէ Պելճիգայի անձեռնմխելի մնալուն, եւրոպական մեծ ազգերու միջև պատերազմ ծագած պահուն ։

— Նովօէ-Վրէմիա ռուսական թերթի Պելկրատի թղթակիցը արտաքսուած է իր վերջին դէպքերու մասին գրած թղթակցութիւններու համար ։

— Բ. Դուռը պաշտօնապէս կը յայտարարէ որ Թրքօ-սերպիական սահմանագլխուն վրայ եղած դէպքերու պատճառով եղած բանակցութիւնները բոլորովին վերջացած են ։

Բ. Դուռը, յուլիս 13ին շրջաբերական մը ղրկած է պետութիւններուն, որով կը յայտարարէ թէ ինքը բոլորովին պատասխանատու չի պիտի համարուի այն դէպքերուն համար, որոնք տեղի պիտի ունենան բազմաթիւ պուլկար, յոյն և սերպ հրոսակախմբերու Մակեդոնիա և Եպիրոս մտնելէն վերջը ։

— Դարմշդատի լրագիրներուն ըսելով Ցարի և Գերմանական կայսեր տեսակցութեան լուրը Վիսբատէնի մէջ ճիշդ չէ. որովհետեւ դահաժառանգի մահուան պատճառով Ցարը չի պիտի կըրնայ օգոստոսին երկրէն հեռանալ ։

— Սելանիկէն կը հեռագրեն որ Շվալիէն բռնող աւազակներէն չորսը բռնուած են, երեքը ողջ, չորրորդը սպաննուած է ։

— Կրետէէն կը հեռագրեն թէ Անգլիական իշխանութիւնները Գանտիա քաղաքի վարչութիւնը յանձնած են Կրէտական իշխանութեան. պալատին վրայ դըրուած անգլիական դրօշակը վերցուցին ։ Մահմետականները կը շարունակեն գաղթել ։

— Պոլսէն կը հեռագրեն «Թայմըզ»ի. Սուլթանին զինուորական խորհրդականները՝ Սուլթանը կը քաջալերեն որ ընդունի Անգլիական ծրագիրը Պաղտատի երկաթուղւոյ գիծը շինելու համար ։

— Կանանց գոնկրէին մէջ ամենէն շատ ուշադրութեան առնուած է կին բժիշկներու հարցը ։

Ամերիկուհի տիկին Ստէֆէնսն կարծիք յայտնած է որ այր՝ մարդիկ և կիները միասին սորվին բժշկութիւնը, ապացուցանելով որ միայն այդպէսով կարելի պիտի ըլլայ իսկական բժիշկներ պատրաստել ։

— Նիւ-Եորքի լրագիրներէն մին հեռագրով Զօլային առաջարկեր է Րէնէէն թղթակցիլ Տրէյֆիւսի գործի մասին ։ Զօլա պատասխանած է որ մէկ միլիոն տոլարով անգամ չի համաձայնիր թղթակցիլ ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

—

Ազգ. վարժարանի շինութենէն մնացորդ 2,227 լէվ պահանջին համար (բացի դատարանական ծախքերէ) ատաղձավաճառ Անմէտ Պինճան էֆէնտի դատարանի դիմած է, յիշեալ գումարին վերջնականապէս գանձմանը համար Տիւպէք-չէշմէի դէմ գտնուած ազգ. գետինը սէքվէսթրօ ըրած է որ ի մօտոյ ըստ օրինի աճուրդի հանուելով պիտի ծախուի ։

Ազգ. այս սեփականութիւնն ի զուր ձեռքէ չի հանելու և այս դոյզն գումարի մը համար օտարներու առջև ամօթով չի մնալու նպատակաւ մասնախումբ մը կարգուած է որ յառաջիկայ շաբթու հանգանակութեան պիտի ձեռնարկէ ։

Ուստի կը խնդրուի բարեպաշտ ազգայիններէ որ հաճին ազգասիրաբար իրենց սրտէն բղխած գումարը նուիրել յանուն ազգային արժանապատուութեան ։

Մնամ աղօթարար
Նախագահ Յանձնախմբին
Սարգիս քհնյ. Ղարիպեան
Վառնա, 23 Յուլիս 99

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

—

Ամերիկա, Վ. Մ. — Ստացանք 20 տոլար ։

— Պուգարէստ, Ճ. — Կը խնդրենք շտապեցէք ուղարկելու ։

— Ամերիկա, Պ. Ճ. — Ձեր խոստումէն շրջանական ժամանակ անցաւ, կսպասենք ։

— Վիլհէլմստորֆ, Մ. — Այդ նամակագրութիւններով չենք կրնար պրօշիւր ղրկել ։ Եւ առհասարակ մէկ հատ ղրկել դժուար է ։

— Սիլիստրէ, Ա. Լ. — Յանձնարարականները կանխիկ են ։ Հաճեցէք գրել թէ դրամը ինչ նամակով էք ղրկած և ինչ անունով ։

— Վառնա, Կ. Մ. — Գրեցէք «Ձեզի յարմար» մաքուր ոճով, բայց միանգամայն միտքը որոշ և պարզ. որպէսզի ընթերցողները ենթադրութիւններու մէջ չիյնան ։

Печатница „Взаимность“ Варна.